ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2023-2025թթ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ.

# ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄ | 2023-2024

Զեկույցը հրապարակվել է ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Զեկույցում ներկայացված կարծիքներն ու վերլուծությունները հեղինակներինն են և չեն ներկայացնում ժողովրդավարության զարգացման հիմնադրամի կարծիքներն ու դիրքորոշումները:

peace DIALOGUE

Democracy Development Foundation

Հետազոտությունն իրականացվել է «Խաղաղության երկխոսություն» ԻԿ-ի կողմից ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ



# ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2023-2025թթ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ.

## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

## ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄ | 2023-2024

© 2024. «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ,
ՎԱՆԱՁՈՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 4

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՌԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ..... 6

2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՉԳԱՅԻՆ ՌԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ..... 13

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 14

Գործողություն 1.1. Զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ԶՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ: ..... 14

ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ ..... 18

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 20

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավելի քան 10 տարի «Խաղաղության երկխոսություն» հկ-ն գործունեություն է ծավալում ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակը բարելավելու ուղղությամբ: 2015թ.-ից սկսած, կազմակերպության մշտադիտարկող խումբը պարբերական գնահատում է իրականացնում ոլորտում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ: «Խաղաղության երկխոսությունը» նաև ՀՀ կառավարության 2023թ.-ի սեպտեմբերի 28-ին ընդունած 1674-Լ որոշմամբ հաստատված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի կատարման համակարգող խորհրդի կազմում է: Այս ամենի հետ մեկտեղ, հկ-ն փորձում է բացահայտել պաշտպանական ոլորտում առկա մարտահրավերները և հնարավորինս աջակցում դրանց լուծմանն ուղղված ջանքերին:

Այս հաշվետվությունը, մասնավորապես, ուղղված է ՀՀ կառավարության կողմից նախագծված 2023-2024 թվականների գործողությունների մշտադիտարկմանը՝ թիրախավորելով պաշտպանության ոլորտում կյանքի իրավունքի պաշտպանությունը:

Մշտադիտարկման գործընթացը մշակվել է երկու հիմնական նպատակով.

- *գնահատել կառավարության ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի համապատասխանությունն իր նպատակներին,*
- *հասկանալ՝ արդյոք ծրագրում ներառված գործողություններն իրականացվել են ըստ ծրագրի, որոշել այդ գործողությունների ունեցած ներդրումը նախանշված ընդհանուր նպատակներին հասնելու ճանապարհին:*

Ըստ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի՝ կյանքի իրավունքի հետ առնչվող համընդհանուր նպատակը վերջինիս արդունավետ պաշտպանությունն է զինված ուժերում, քրեական դատավարության ընթացքում, իրավապահ մարմինների հետ առնչվելիս, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրելիս կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման դեպքում:

## ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- Մինչև 2025 թվականի ավարտը ակնկալվում է զինված ուժերում ոչ կանոնադրական հարաբերությունների, այդ թվում կարգապահական և քրեական հանցագործությունների դեպքերի թվի կրճատում առնվազն 15 տոկոսով՝ ըստ 2022 թվականի վիճակագրական տվյալների (ընդգրկված չէ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մեջ):
- Մինչև 2025 թվականի ավարտը ակնկալվում է զինված ուժերում և քրեակատարողական հաստատություններում ծառայողների և ոչ մարտական պայմաններում ազատությունից զրկված անձանց մահվան դեպքերի թվի

կրճատում առնվազն 25 տոկոսով՝ ըստ 2022 թվականի վիճակագրական տվյալների (ընդգրկված չէ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մեջ):

Կառավարությունն առանձնացրել է զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված մեկ հիմնական գործողություն՝ ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը որպես կյանքի իրավունքի պաշտպանության կարևոր բաղադրիչ: Գործողության իրականացման նպատակով նախատեսվում են հետևյալ քայլերը.

- մշակել զինվորական կարգապահության կարևորության մասին վեց տեսանյութ և տարածել դրանք զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև ավագ դպրոցներում՝ որպես սոցիալական նշանակության հոլովակներ,
- զինված ուժերում գործունեություն ծավալող հոգեբան-սպաների 100 տոկոսին ապահովել մասնագիտացված վերապատրաստումներով:

# ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀՀ կառավարության կողմից ընդունված 2023-2025 թվականների համար նախատեսված գործողությունների համապատասխանությունը գնահատելու համար «Խաղաղության երկխոսություն» հկ-ն մի շարք հարցումներ է ներկայացրել պաշտպանության նախարարությանը և Հայաստանի տարածքում անանուն հարցազրույցներ անցկացրել նախկին ժամկետային զինծառայողների հետ:

«Խաղաղության երկխոսության» ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է 2021-2023 թվականների ընթացքում հայկական բանակում ոչ մարտական պայմաններում մահվան ամենատարածված դեպքերի 5 օրինակ.

- մահվան ելքով պատահարներ (28 տոկոս), այդ թվում՝ ռազմական մեքենաների, սարքավորումների հետ կապված միջադեպեր և այլ պատահարներ, որոնք հանգեցրել են զինվորական անձնակազմի մահվան դեպքերի,
- առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքեր (24 տոկոս),
- հրադադարի ռեժիմի խախտման դեպքեր, երբ զինվորները սպանվել են հակառակորդի կողմից ոչ մարտական պայմաններում (21 տոկոս),
- միտումնավոր կամ ոչ միտումնավոր սպանության դեպքեր (16 տոկոս),
- ինքնասպանության դեպքեր (11 տոկոս):

2020-2024 թվականների ընթացքում պարտադիր ժամկետային ծառայություն անցած նախկին ժամկետային 60 զինծառայողի հետ մանրակրկիտ անանուն հարցազրույցների արդյունքում, պարզվել է, որ ըստ 19 հարցվողի՝ իրենց ծառայության ընթացքում տեղի են ունեցել ոչ մարտական պայմաններում մահվան դեպքեր: Հարցվողներից մի քանիսը նույնիսկ հայտնել են մեկից ավելի նման դեպքերի մասին: Ի պատասխան մահվան այս դեպքերի պատճառների մասին հարցին՝ երեք հարցվող նշել է առողջական խնդիրների, վեցը՝ դժբախտ պատահարների, չորս հարցվող հայտնել է սպանության դեպքերի, իսկ երեք հարցվող հստակ տեղեկություն չուներ պատճառների մասին:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ն նախարարությունից մանրամասներ է խնդրել 2021-2023 թվականների ընթացքում զինված ուժերում արձանագրված, առողջական խնդիրներով պայմանավորված, մահվան 46 դեպքի մասին, որից 10-ը դասակարգվել է որպես զինվորական ծառայության հետ առնչվող դեպք: Հարկ է նշել, որ մահվան դեպքերը դատախազության կողմից դասակարգվում են կամ որպես «զինվորական ծառայության հետ առնչվող», կամ «զինվորական ծառայության հետ կապ չունեցող» դեպքեր: Առաջին դասին են պատկանում զինվորական ակտիվ գործողությունների կամ պարտադիր ժամկետային ծառայության շրջանակներում տեղի ունեցած դեպքերը, իսկ արձակուրդի, ծառայության տարածքից դուրս կամ ռազմական գործողություններին չառնչվող մահվան դեպքերը դասվում են զինվորական ծառայության հետ կապ չունեցող դեպքերի շարքին՝ կախված յուրաքանչյուր դեպքի հստակ մանրամասներից: «Խաղաղության երկոսություն» հկ-ն, մասնավորապես, պարզաբանումներ է

խնդրել՝ արդյո՞ք մահացած զինծառայողներից որևէ մեկը հայտնել է առողջական խնդիրների մասին, կամ բուժօգնություն է ստացել ծառայության ընթացքում:

Նախարարությունը հաստատել է մահացության դեպքերի թիվը, սակայն նշել է, որ քրեական հետախուզությունը դեռևս ընթացքի մեջ է՝ առաջարկելով, որ հետագա տեղեկատվություն ստանալու համար հկ-ն կապ հաստատի իրավապահ մարմինների հետ: Արդյունքում, նախարարության կողմից մանրամասներ չեն ներկայացվել՝ արդյոք զինծառայողներից որևէ մեկը հայտնել է առողջական խնդիրների մասին, կամ բուժօգնություն է ստացել ծառայության ընթացքում:

Անանուն հարցումների ընթացքում «Խաղաղության երկխոսություն» հկ-ն նաև հետաքննություն է անցկացրել՝ արդյոք եղել են այնպիսի դեպքեր, երբ առողջական լուրջ խնդիրներ ունեցող զինվորներին հրաժարվել են բուժօգնություն տրամադրել: Հարցվողների մեծ մասը՝ 37 հոգի, նշել է, որ իր ծառայության ընթացքում նման դեպքերի չի առնչվել, մինչդեռ չորս հարցվող հայտնել է, որ նման դեպքեր, իրականում, եղել են: 19 հարցվող տեղեկություն չի ունեցել նման դեպքերի մասին:

Հարցազրույցների միջոցով հետագայում ուսումնասիրվել է զորամասերում բուժօգնության որակը: 27 հարցվող հայտնել է, որ անհրաժեշտության դեպքում ստացել են պատշաճ բուժօգնություն, իսկ 17 հոգի նշել է, որ իրենց ապահովել են միայն ամենասովորական դեղորայքով՝ առանց հավելյալ բուժումների: 8 հոգի նշել է, որ պատշաճ բուժօգնություն ընդհանրապես չի ստացել, եւս երեքը հայտնել է, որ զինվորներին հիվանդանոց էին ուղարկում բուժօգնություն ստանալու համար: Հինգ հարցվող նախընտրել է չպատասխանել հարցին:

Զարմանալիորեն, 60 հարցվողներից 52-ը հայտնել է, որ զորամասերում եղել են զինծառայողներ, որոնք զորակոչի ժամանակ բժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել են զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի: Թեև որոշ զորամասեր հաշվի են առել այս սահմանափակումները, հարցվածների զգալի մասը նշել է, որ այդ սահմանափակումները հաճախ անտեսվել են կամ միայն մասամբ են կիրառվել: Որոշ առումներով նման դեպքերը հնարավոր էին միայն անձնական կապերի միջոցով, ինչը ենթադրում է համակարգված կիրառման բացակայություն: Հարցվածներից ստացված պատասխանները նաև վկայում են, որ ծառայողների առողջական խնդիրները ոչ միշտ են լուրջ ընդունում, ինչն էլ հանգեցնում է ցավալի հետևանքների:

Հարցվողներից մեկն ասել է. «Ծառայողներից մեկի ողնաշարն ակնհայտորեն ծուռ էր, բայց նա միշտ ամենածանր ֆիզիկական աշխատանքն էր կատարվում»:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության համար առաջնային խնդիր է (որպես կյանքի իրավունքի պաշտպանության համար կարևոր բաղադրիչի) հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ապահովումը՝ «Խաղաղության երկխոսությունը» փորձել է գնահատել զորամասերում միջանձնային հարաբերությունների, կոնֆլիկտների և սոցիալական հիերարխիայի

դինամիկան՝ կենտրոնանալով վիճաբանությունների, սոցիալական լարվածությունների, ոտնձգությունների և դրանց լուծմանն ուղղված քայլերի վրա: 60 հարցվողներից 32-ը հայտնել է, որ վիճել կամ կռվել է իր ծառայակիցների հետ, 25-ը նման դեպքերի մեջ ներգրավված չի եղել, եւս երեքը նախընտրել է չպատասխանել հարցին: Ըստ հարցվողների՝ վիճաբանությունները հիմնականում հարթվում էին բանակցությունների և համաձայնությունների միջոցով, որոնց մասին սպաները կամ տեղյակ չեն եղել, կամ չեն ներգրավվել դրանցում: Բացի այդ, 24 հարցվող նշել է, որ կային որոշ զինվորներ, ում ոչ ոք չէր սիրում: Նման հակակրանքի պատճառները հաճախ բխում էին ամբարտավան, անպատասխանատու պահվածքից կամ սպաների և հրամանատարների կողմից այդ զիվորների նկատմամբ տածած համակրանքից: Հարկ է նշել, որ նրանց հաճախ անվանում էին «գործ տվողներ», ովքեր մյուսների արարքների մասին հայտնում էին սպաներին կամ ռազմական ոստիկանությանը, ինչի պատճառով նրանք ավելի էին հեռանում իրենց ծառայակիցներից:

Ոտնձգությունը տարածված խնդիր է եղել զորամասերում. 37 հարցված հայտնել է, որ որոշ ծառայողներ ենթարկվել են ճնշումների, ոտնձգությունների և ստիպված են եղել անցանկալի աշխատանք կատարել: Նրանք հիմնականում եղել են զինվորներ, որոնք չեն կարողացել ինքնապաշտպանվել (34 հարցվող), կամ չեն հետևել հիգիենայի կանոններին, տարածել են կեղծ տեղեկություններ, կամ ոտնձգությունների են ենթարկվել սեռական կողմնորոշման պատճառով: Տվյալները ցույց են տալիս, որ ոտնձգության եղանակները տատանվում էին շահագործումից (21 հարցվող) և ծաղրից (15 հարցվող) մինչև ֆիզիկական կամ հոգեբանական բռնության ավելի ծանր դեպքեր (9 հարցվող) կամ անմարդկային վերաբերմունք (5 հարցվող): Նշել են նաև անձնական իրերի գողացման և արժանապատվությունը նվաստացնող այլ դեպքերի մասին: Հարցվողներից մեկը նշել է, որ ոտնձգության դեպքերն արմատացած են մշակույթի մեջ, և հայտնել. «Խեղճերին ոտնձգության ենթարկելը տարածված պրակտիկա էր, բայց եթե սպաները թույլ չտային նման վերաբերմունք, ապա նման բան չէր լինի»:

Բացի այս, հարցման 7 մասնակից նշել է, որ սպաները միջամտում էին նման դեպքերին, ինչը վկայում է, որ պաշտոնյաները միջամտել են որոշ իրադարձությունների, բայց ոչ պարբերաբար: Այս անհամապատասխանությունը ցույց է տալիս, որ մինչ ոտնձգությունները հաճախ որպես նորմ են դիտարկվում, հրամանատարական կազմի ներգրավվածությունը կարող է կամ թույլ տալ, կամ կանխել նման վարքագիծը: Ոտնձգություններն առանցքային խնդիր էին դարձել հատկապես խոցելի զինվորների համար, ովքեր ի վիճակի չէին պաշտպանվել կամ մարգինալացված խմբերի մաս են կազմել: Հայտնել են շահագործման, ծաղրի և նույնիսկ բռնության դեպքերի մասին, և, չնայած սպաները երբեմն խառնվում էին նման դեպքերին, նրանց ներգրավվածությունը, սակայն, կանոնավոր բնույթ չէր կրում:

Ինքնասպանության դեպքերի կանխարգելմանն ուղղված պաշտպանության նախարարության ծրագրած քայլերը հասկանալու համար «Խաղաղության

երկխոսություն» հկ-ն լրացուցիչ հարցում է ուղարկել: 2021-2023 թվականներին արձանագրվել է ծառայության ընթացքում ինքնասպանության 16 դեպք: Այնուամենայնիվ, նախարարության կողմից հիմնավոր տեղեկատվություն չի ստացվել զորամասերում գործող հոգեբանական աջակցության վերաբերյալ, որտեղ տեղի են ունեցել այդ միջադեպերը: Կազմակերպությունը, մասնավորապես, հետաքրքրվել է՝ արդյոք նշված ստորաբաժանումներում եղել են սպա-հոգեբաններ, և արդյոք նախազգուշացնող նշաններ հայտաբերվել են մինչև ինքնասպանության դեպքերի տեղի ունենալը: Մանրամասն պատասխանների բացակայությունն անհանգստություն է առաջացնում ռազմական ոլորտում գործող հոգեբանական առողջության պրակտիկաների արդյունավետության շուրջ:

Նախարարությունը հաստատել է, որ ոչ բոլոր զորամասերը, որտեղ ինքնասպանության դեպքեր են գրանցվել, ունեին սպա-հոգեբաններ՝ հաստիքների չհամալրվածության պատճառով: Ավելին, նախարարությունը նշել է, որ 2021-2023 թվականների ընթացքում ինքնասպանություն գործած զինծառայողները դասակարգված չեն եղել «ռիսկային խմբի» մեջ:

«Խաղաղության երկխոսություն» հկ-ն նաև հարցել է՝ արդյո՞ք ինքնասպանություն գործած զինծառայողներից որևէ մեկը կապ է հաստատել պաշտպանության նախարարության թեժ գծի հետ, և ինչ ընթացակարգով են արձագանքել նման ահազանգերին: Հարցումը, հատկապես, անդրադառնում էր այն կետին՝ արդյոք թեժ գծի օպերատորները համապատասխան հմտություններ ունեն ինքնասպանության միտումները բացահայտելու համար, և ի՞նչ գործողություններ են ձեռնարկվում ինքնասպանության դեպքերը կանխելու համար, երբ հնարավոր ռիսկեր հայտնաբերվում են: Նախարարությունը պատասխանել է, որ նախքան ինքնասպանություն գործելը զինծառայողների կողմից թեժ գծին դիմելու դեպքեր չեն գրանցվել: Ինչ վերաբերում է թեժ գծի ընթացակարգերին, նախարարությունը պարզաբանել է, որ թեժ գիծը կազմակերպվում է նորմատիվ իրավական ակտերի, նախարարների հրամանների, նախարարության և ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կանոնադրության հիման վրա: Նախարարությունն իր պատասխանում նշել է նաեւ, որ թեժ գծի աշխատակիցների հմտությունների բարելավման համար պարբերաբար վերապատրաստումներ են կազմակերպվում:

Նախարարության պատասխանները ի ցույց են դնում զինված ուժերում հոգեբանական աջակցության տրամադրման մարտահրավերները, մասնավորապես՝ շատ դեպքերում սպա-հոգեբանների բացակայությունը և ինքնասպանության դեպքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների անարդյունավետությունը: Չնայած թեժ գծի գործունեության որակը բարելավելու և վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ գործադրված ջանքերին՝ հոգեբանական առողջության պրակտիկաների մասին մանրակրկիտ տեղեկատվության և վաղ միջամտության ընթացակարգերի բացակայությունը վկայում են, որ հավելյալ ուշադրություն է անհրաժեշտ ռիսկի գոտում գտնվող

զինծառայողներին բացահայտելու եւ նրանց համապարփակ աջակցությամբ ապահովելու համար:

Ըստ զորամասերում սպա-հոգեբանների ներկայության գնահատման՝ 60 հարցվողից 44-ը փաստել է սպա-հոգեբանների ներկայությունը իրենց զորամասերում: 12 հարցվող, սակայն, վստահ չէր՝ արդյոք եղել են սպա-հոգեբաններ, ինչը վկայում է հաղորդակցության կամ հասանելիության հնարավոր խնդիրների մասին: Նույնիսկ, երբ որևէ զորամասում նշանակվում են սպա-հոգեբաններ, նրանց դերը կամ ներկայությունը կարող է հայտնի չլինել՝ սահմանափակելով անհրաժեշտության դեպքում աջակցություն փնտրելու զինվորների հնարավորությունը:

Իրազեկվածության այս պակասը կարող է խոչընդոտել հոգեկան առողջության առկա ռեսուրսների արդյունավետությանը: Չորս հարցվող հայտնել է, որ իրենց զորամասերում սպա-հոգեբան չի եղել:

Տվյալները նաև ընդգծում են զինծառայողների շրջանում հոգեբանական ծառայությունների օգտագործման և ընկալման շուրջ հիմնական պատկերացումները: Հարցվողների զգալի մեծամասնությունը՝ 38 հոգի, հայտնել է, որ հոգեբանական աջակցության կարիք չի ունեցել ծառայության ընթացքում, իսկ ութ հարցվող նշել է, որ իրենց զորամասերում խմբակային հանդիպումներ էին կազմակերպվում հոգեբանների հետ:

Իրենց զինծառայակիցներին վերաբերող հարցին 24 հարցվող շեշտել է, որ տեղյակ չի եղել՝ արդյոք ուրիշները հոգեբանի օգնության կարիք են ունեցել, թե ոչ, իսկ 14 հարցվող պատասխանել է, որ ծառայակիցները հոգեբանական օգնության կարիք չեն ունեցել: 10 հարցվող ասել է, որ զինծառայակիցներից ոմանք դիմել են հոգեբանական աջակցության:

Հոգեբանական աջակցության դիմած զինծառայողների մասին հարցվողներից 7-ը հայտնել է, որ այդ քայլն օգտակար է եղել ծառայակիցների համար: Հայտնի է մի ուշագրավ դեպք մի զինվորի մասին, որն օգնություն էր խնդրել ինքնավնասման հակումներ ունենալու խնդրի համար: Հոգեբանը միջամտել էր ընտանեկան առկա խնդրին, ինչը հանգեցրել էր այդ զինվորի՝ մեկ այլ զորամաս տեղափոխվելուն: Ըստ հարցվողների՝ սա, ի վերջո, օգնել էր նրան: Երեք հարցվող տեղեկություն չի տրամադրել՝ արդյո՞ք օգնության դիմելը որևէ բան փոխել է, թե՞ ոչ:

Երբ հոգեբանական օգնության չդիմած հարցվողներին հարցրել են, թե ինչու չեն դիմել օգնության, 37 հոգի նշել է, որ նման օգնության կարիք չի ունեցել, իսկ 13 հոգի նշել է, որ չի վստահում համակարգին: Հարցվողներից մեկը պարզաբանել է, որ ռազմական ոլորտում աշխատող հոգեբանների հետ անձնական խնդիրներով կիսվելն իր համար ռիսկային է, քանի որ ավելի հավանական է, որ այն հետագա խնդիրների հանգեցնի, քան՝ լուծի դրանք: Մեկ ուրիշը հայտնել է, որ նախընտրում է հոգեբանների, որոնք ռազմական համակարգից դուրս են գործում՝ վախենալով,

որ համակարգի ներսում գործող հոգեբանների հետ աշխատանքը կարող է հավելյալ խնդիրներ առաջացնել:

Որոշ հարցվողներ նաև մատնանշել են իրենց զորամասերում հոգեբանների մասին իրազեկվածության կամ տեսանելիության բացակայությունը: Մեկ մասնակից նշել է. «Սպաներն ավելի շատ հոգեբանների կարիք ունեն. միգուցե մեզ մոտ եղել են հոգեբաններ, բայց ես նույնիսկ տեղյակ չեմ եղել»: Սա ընդգծում է հոգեկան առողջության ծառայությունների առկայության մասին պատշաճ հաղորդակցության բացերի մասին, ինչը կարող է այդ ծառայություններից քիչ օգտվելու պատճառ լինել:

Այդ իսկ պատճառով, ՀՀ կառավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մեջ ընդգրկված գործողությունները՝ ուղղված հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի խթանմանը և ռազմական կարգապահության ամրապնդմանը, դրական քայլ են դեպի առաջ, բայց, հավանաբար, լիովին չեն լուծում խանգարող խնդիրները, որոնք բացահայտվել են «Խաղաղության երկխոսություն» հկ-ի ուսումնասիրությունների արդյունքներով:

Առանցքային խնդիր են առողջական խնդիրներով պայմանավորված, ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը: Պարզ չէ՝ արդյոք առողջական գանգատներ ունեցող զինծառայողները պատշաճ բուժօգնություն են ստացել, և արդյոք բժշկական սահմանափակումների կիրառումը հաճախ անհամապատասխան է եղել: Սա մատնանշում է պաշտպանության ոլորտում առողջության հետ կապված առկա բացերը, որոնք կարող են խոչնդոտել առողջական խոցելիություն ունեցող զինծառայողների անվտանգությանը:

Մինչ գործողությունների ծրագիրը ենթադրում է հարգանքի և կարգապահության դրսևորումներ՝ կոնֆլիկտները, սոցիալական ճնշումներն ու ոտնձգությունները շարունակում են անհանգստացնող խնդիր մնալ զորամասերում: Քրեական ենթամշակույթը բանակում պահպանվում է՝ չնայած ավելի հարգալից միջավայր ստեղծելու ջանքերին: Վիճաբանությունները երբեմն հարթվում են բանակցությունների միջոցով, սակայն ծաղրանքների, շահագործման դեպքերի և սպաների կողմից ոչ համաչափ միջամտությունների մասին հաղորդումներն ընդգծում են առավել խիստ ղեկավարման և ոտնձգությունների դեմ ավելի խիստ քաղաքականության կիրառման անհրաժեշտությունը:

Ինքնասպանության դեպքերի կանխարգելման ոլորտում էլ թուլություններ են նկատվում՝ անբավարար հոգեբանական աջակցության և հոգեկան առողջության հասանելի ծառայությունների մասին ցածր տեղեկացվածության տեսքով: Անգամ ծրագրի՝ հոգեբան-սպաների պատրաստման վրա կենտրոնացման դեպքում զգալի թվով զինծառայողներ անվստահություն են հայտնել համակարգի նկատմամբ, իսկ ինքնասպանության դեպքերին միջամտությունն ապարդյուն է եղել:

Ամփոփելով՝ նշենք, որ մինչդեռ ՀՀ կառավարության գործողությունների ծրագիրը զինված ուժերում պայմանների բարելավման ուղղությամբ դրական առաջընթաց է արձանագրում, զգալի բացթողումներ դեռևս նկատվում են առողջության պաշտպանության, կոնֆլիկտների հարթման և հոգեկան առողջության աջակցության ոլորտում: Զինծառայողների իրավունքներն ու բարօրությունը լիովին ամրապնդելու համար էական նշանակություն ունեն քաղաքականությունների ավելի խիստ կիրառումը, ավելի արդյունավետ ղեկավարումը և պատասխանատվության ու հոգատարության նկատմամբ մշակութային տեղաշարժը:

# 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Ձինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված 2023-2025 թվականների գործողությունների ծրագրում հիմնական միջոցառումը սահմանվում է որպես «**Գործողություն 1.1.** Ձինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ՁՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ»: Այս գործողությունն ընդգրկում է երկու ենթագործողություն.

- զինվորական կարգապահության կարևորության մասին վեց տեսանյութերի մշակում և դրանց տարածում զանգվածային լրատվության միջոցներով և ավագ դպրոցներում որպես սոցիալական տեսանյութեր (վերջնաժամկետը՝ 2025 թվականի երկրորդ կիսամյակ),
- զինված ուժերում հոգեբան-սպաների 100 տոկոսի մասնագիտացված վերապատրաստումների կազմակերպում (վերջնաժամկետը՝ 2025 թվականի երկրորդ կիսամյակ):

2024 թվականի առաջին կիսամյակի տվյալներով՝ ՀՀ կառավարությունը հայտնել է գործողություն 1.1-ի մասնակի իրականացման մասին:

# «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Գործողություն 1.1. Զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ՀՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ:

Գործողության իրականացման վերջնաժամկետը 2025 թվականի երկրորդ կիսամյակն է:

**Ելակետային տվյալները հետևյալն են.**

- *Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ մշակվել է «ՀՀ զինված ուժերում ոչ ֆորմալ հարաբերությունների վարքագծային նորմերը և զինվորականների շրջանում «հանցավոր ենթամշակույթների» դրսևորման սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտությունը նախատեսված էր իրականացնել 2022 թվականին, սակայն հետաձգվել է սեպտեմբերի 13-14-ին տեղի ունեցած ռազմական գործողությունների պատճառով:*
- *Պայմանագրային և պարտադիր ժամկետային զինծառայողների շրջանում իրականացվել են անանուն սոցիոլոգիական հարցումներ և անհատական ու խմբային քննարկումներ ռազմական ոլորտում բարօրության, ընկերասիրության մասին, ինչպես նաև դաժանության ու անհանդուրժողականության բացասական հետևանքների վերաբերյալ: Արդյունքները ենթարկվել են վերլուծության և կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար, կոնկրետ ցուցումների հետ միասին, ուղարկվել են զորամասերի հրամանատարական կազմերին:*
- *2020 թվականի հունվարից 2022 թվականի դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում 28 սպա-հոգեբան վերապատրաստումներ է անցել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, Մոսկվայի ռազմական համալսարանում (Ռուսաստան), և «Ինթրա» հոգեկան առողջության կենտրոնում:*

**Որպես չափելի ցուցանիշներ սահմանվել են հետևյալ կետերը.**

- մշակվել է զինվորական կարգապահության կարևորության մասին վեց տեսանյութ, տարածվել՝ զանգվածային լրատվության միջոցներով և համալսարաններում,
- տեսանյութերը մշակվել են միջդիսցիպլինար թիմի կողմից (որի կազմի մեջ մտնում էին հոգեբան, իրավաբան և ռազմական փորձագետ)՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան (ներառյալ սեռական բաղադրիչը),
- սպա-հոգեբանների 100 տոկոսի գիտելիքներն ու հմտությունները բարելավվել են ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի միջազգային իրավական չափանիշներին համապատասխանող վերապատրաստումների միջոցով:

Վերապատրաստումները տևել են առնվազն 4 ակադեմիական ժամ, իսկ վերապատրաստումներից հետո մասնակիցները հետվերապատրաստական գնահատման արդյունքում կարող են ցուցադրել ստացած գիտելիքի առնվազն 80 տոկոսը:

Կառավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի 2024 թվականի առաջին կիսամյակում գրանցած առաջընթացի մասին հաշվետվության համաձայն՝

- պայմանավորվածություն է ձեռք բերվել Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ զինվորական կարգապահության կարևորության մասին տեսանյութերի մշակման ու ՁԼՄ-ների միջոցով և հանրակրթական դպրոցներում դրանց տարածման վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպվել են երկօրյա դասընթացներ՝ «Զինված ուժերում ոչ ֆորմալ հարաբերությունների վարքագծային նորմերը և զինվորականների շրջանում «հանցավոր ենթամշակույթների» դրսևորման սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով (այս դասընթացներն անդրադառնում էին նաև կյանքի իրավունքին և դաժան վերաբերմունքի կանխարգելմանը),
- ամբողջ դրույքով աշխատող հոգեբանների 20 տոկոսը մասնագիտացված վերապատրաստումներ է անցել:

Ինչ վերաբերում է Գործողություն 1.1-ի իրականացմանը, «Խաղաղության երկխոսություն» հկ-ն պաշտոնական հարցում է ներկայացրել պաշտպանության նախարարությանը հետեւյալ կարևոր կետերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով.

- ի՞նչ հիմնավորմամբ (հետազոտություն, միջազգային փորձ, առաջարկ կամ այլ) է ՀՀ պաշտպանության նախարարությունում ձևավորվել սպա-հոգեբանների հաստիքը,
- ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերի քանի՞ տոկոսն է համալրված սպա-հոգեբաններով,
- գոյություն ունի, արդյոք, սպա-հոգեբանների աշխատանքի գնահատման մեխանիզմ (առկա լինելու դեպքում խնդրում ենք հայտնել՝ ի՞նչ մեխանիզմով է իրականացվում սպա-հոգեբանների աշխատանքի գնահատումը),
- արդյո՞ք վարվում է զորամասերի սպա-հոգեբաններին դիմած անձանց քանակի վերաբերյալ վիճակագրություն, եթե այո՝ խնդրում ենք տրամադրել վիճակագրական տվյալներ զորամասերի սպա-հոգեբաններին դիմող անձանց քանակի և առավել հաճախ հանդիպող խնդիրների վերաբերյալ,
- գործողությունների ծրագրով նախատեսված է վերապատրաստման դասընթաց սպա-հոգեբանների համար. ո՞ւմ կողմից են իրականացվելու վերապատրաստումները և ի՞նչ ծրագրով,
- 2024 թվականի առաջին կիսամյակի ավարտին նախատեսվել է մշակել և տարածել մեկ տեսաձայնագրություն. խնդրում ենք տրամադրել տեսաձայնագրության հղումը:

Իր պատասխան նամակում պաշտպանության նախարարությունը պարզաբանում է, որ սպա-հոգեբանների դերը մշակվել է այլ երկրներում կիրառվող ռազմական հոգեբանության պրակտիկայի ուսումնասիրությունների հիման վրա: Այդ երկրներն, այնուամենայնիվ, չեն հստակեցվել: Մանրամասն տեղեկատվություն չի ներկայացված սպա-հոգեբանների կատարողականի գնահատման մեխանիզմների մասին՝ ներկայացնելով միայն պլանավորման և հաշվետվության փաստաթղթերը, որոնք ենթադրում են որոշակի մակարդակի վերահսկողություն՝ առանց գնահատման չափանիշների հստակեցման:

Նախարարությունը նաև նշել է, որ մշակվել է սպա-հոգեբանների աջակցության կարիքն ունեցող զինծառայողների վերահսկողության մատյան: Արձանագրված ամենատարածված խնդիրները կապված էին զինվորական ծառայությանը հարմարվելու և նյարդահոգեբանական խնդիրների հետ: Սպա-հոգեբանների աշխատանքի արդյունավետության գնահատման համար կիրառված գնահատման մեթոդների մասին եւս հավելյալ տեղեկատվություն կորզել այդ նամակից չի ստացվել:

Ինչ վերաբերում է վերապատրաստումներին, նախարարությունը կարևորել է սպա-հոգեբանների համար իրականացվող ծրագրերը՝ նշելով Ժնևի անվտանգության ոլորտի կառավարման կենտրոնի (DCAF) հետ համագործակցությունը հոգեկան առողջության խթանման և զինված ուժերում ինքնասպանությունների կանխարգելման նպատակով: ՊՆ-ն նաև նշել է «Ինքնասպանությունների ռիսկի գնահատման, կանխարգելման և կառավարման շուրջ վերապատրաստումների ծրագրի ձեռնարկի» մասին: Սպա-հոգեբանների համար տարին երկու անգամ անց են կացվում երկու ամիս տևողությամբ վերապատրաստումներ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: Նախարարությունը հակիրճ տեղեկացրել է, որ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրին առնչվող տեսաձայնագրությունները մշակման փուլում են և կտարածվեն, սակայն լրացուցիչ մանրամասներ չեն տրամադրվել, իսկ պահանջվող տեսանյութը դեռ հրապարակված չէ:

Սույն հաշվետվության շրջանակներում «Խաղաղության երկխոսություն» հկ-ն որոշ անհամապատասխանություններ է նկատել կառավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի առաջընթացի մասին հաշվետվության և պաշտպանության նախարարության կողմից կազմակերպության հարցմանը տրված պատասխանի միջև.

- անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոնի (DCAF) հետ համատեղ շարունակվող սպա-հոգեբանների վերապատրաստման ծրագրերը հիշատակված չեն կառավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի առաջընթացի մասին հաշվետվության մեջ,
- կառավարության զեկույցում խոսք է գնում «Զինված ուժերում ոչ ֆորմալ հարաբերությունների վարքագծային նորմերը և զինվորականների շրջանում «հանցավոր ենթամշակույթների» դրսևորման սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները» թեմայով երկօրյա դասընթացների մասին, մինչդեռ

նախարարության կողմից ստացված պատասխանի մեջ նշվում է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում երկամսյա վերապատրաստումների մասին, ինչը վկայում է վերապատրաստման ծրագրերի տևողության և կառուցվածքի անհամապատասխանությունների մասին:

# ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված ՀՀ կառավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի մշտադիտարկումը բացահայտում է ինչպես գովելի առաջընթաց, այնպես էլ մտահոգություն առաջացնող ոլորտներ: Կառավարությունը դրական ջանքեր է գործադրել, օրինակ, զինվորական կարգապահության վերաբերյալ տեսանյութերի մշակման և դրանց տրածման, սպա-հոգեբանների համար վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ: Այս նախաձեռնությունները նպատակ ունեն խթանել հանդուրժողականությունը, փոխադարձ հարգանքը և ուժեղացնել հոգեկան առողջության աջակցությունը զորամասերում:

Այնուամենայնիվ, «Խաղաղության երկխոսություն» հկ-ի հավաքագրած տեղեկությունները կարևոր բացթողումներ են մատնացույց անում այս գործողությունների թե՛ իրականացման, թե՛ արդյունավետության մեջ: Առողջական խնդիրների, ոտնձգությունների պատճառով ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը և հոգեբանական ոչ պատշաճ աջակցությունը շարունակում են արդիական խնդիր մնալ: Նախկին ժամկետային զինծառայողների հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ առողջական խնդիրները ոչ միշտ են պատշաճ ուշադրության արժանանում, իսկ սահմանափակումներով ժամկետային զինծառայություն անցնողների ֆիզիկական պատրաստվածության սահմանափակումներն անհետևողական կերպով են կիրառվում: Ավելին, ծաղրանքի և ոտնձգությունների դեպքերին սպաների հետևողական միջամտությունների բացակայությունն ընդգծում է ավելի ուժեղ ղեկավարման և դրանց նկատմամբ առավել խիստ քաղաքականության կիրառման անհրաժեշտությունը:

Ինքնասպանության դեպքերի կանխարգելման ոլորտում պաշտպանության նախարարության պատասխանը ցույց է տալիս, որ հոգեբանական աջակցության ծառայությունները բավականաչափ հասանելի կամ վստահելի չեն զինծառայողների համար, իսկ թեժ գծի գործունեությունը բարելավման կարիք ունի: Հոգեբան-սպաների պատրաստմանն ուղղված կառավարության ջանքերն, անշուշտ, դրական քայլ է, սակայն ավելի մեծ ուշադրություն է պետք հատկացնել այն բանին, որ նման քայլերն ի վերջո հանգեցնեն զինվորական անձնակազմի բարեվարքության բարելավմանը:

Ավելին, բանակում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի մյուս պատճառները, ինչպիսիք են դժբախտ պատահարներն ու սպանությունները, պատշաճ լուծում չեն ստանում՝ չնայած այն բանին, որ զինված ուժերում մահվան դեպքերի զգալի մասը դժբախտ պատահարների և դիտավորյալ սպանությունների հետևանք է: Թերեւս, հնարավոր է հասնել սպանությունների թվի կրճատմանը՝ նվազեցնելով ոչ կանոնադրական հարաբերությունների ռիսկերը և լուծելով հանցավոր ենթամշակույթի, ծաղրի և ոտնձգությունների հետ կապված հիմնախնդիրը, սակայն դեռեւս հետագա մեծ ջանքեր են պահանջվում դժբախտ

պատահարների (մասնավորապես՝ ռազմական մեքենաների և սարքավորումների հետ կապված) խնդիրները հնարավորինս բացառելու համար: Այս առումով, անչափ կարևոր է վերլուծել այս պատահարների պատճառները և հասկանալ, թե ինչպես կարող է պետությունը նվազեցնել ռազմական տեխնիկայի և տեխնոլոգիաների հետ կապված նման պատահարների ռիսկը:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կառավարությունը պարտավոր է ապահովել, որ առողջական գանգատներ ունեցող բոլոր զինծառայողներն ստանան համապատասխան բուժօգնություն, և որ ֆիզիկական պատրաստվածության սահմանափակումները հետևողականորեն կիրառվեն բոլոր զորամասերում: Բժշկական խնդիրների արդյունքում արձանագրված յուրաքանչյուր մահվան դեպքի պատճառների խորն ուսումնասիրությունը եւ վերջինիս արդյունքների վերաբերյալ ավելի մեծ թափանցիկության ներդրումը նաեւ կօգնի լուծել առկա բացերը:

- Հրամանատարների և սպաների համար ցանկալի կլինի սովորել ակտիվորեն միջամտել ոտնձգությունների, ահաբեկման և սոցիալական լարվածության դեպքերին: Զրոյական հանդուրժողականության հստակ քաղաքականության իրականացումը սահմանված ուղեցույցներով և հաշվետվողականությունն էական նշանակություն կարող են ունենալ ավելի անվտանգ միջավայր ստեղծելու համար:

- Անհրաժեշտ է ընդլայնել սպա-հոգեբանների տեսանելիությունն ու հասանելիությունը բոլոր զորամասերում: Հոգեբանների՝ որպես հրամանատարական կառուցվածքից անկախ գործող մարմինների դիրքավորումը կարող է մեծացնել այս ծառայության նկատմամբ վստահությունը: Բացի այդ, հոգեբանական աջակցության արդյունավետության վերաբերյալ զինծառայողների կանոնավոր արձագանքներն ու գնահատականները կնպաստեն անհրաժեշտ բարելավումներին:

- Ինքնասպանության հակումների վաղ հայտնաբերումն ապահովելու համար կարևոր նշանակություն ունեն թեժ գծի ընթացակարգերի վերանայումը/ուժեղացումը և օպերատորների համար համապարփակ վերապատրաստումների կազմակերպումը: Իրազեկման արշավները, որոնք կխրախուսեն զինծառայողներին օգնություն փնտրել գաղտնի եւ անանուն հասանելի ուղիներով, կարող են հետագայում բարելավել այդ ծառայությունների հասանելիությունն ու արդյունավետությունը:

- Ապահովել ներկայացված տեղեկատվության և սպա-հոգեբանների վերապատրաստումների իրական ծրագրերի միջև համապատասխանությունը: Դասընթացի տևողությանն ու կառուցվածքին վերաբերող անհամապատասխանությունների վերացումը կարևոր նշանակություն կունենա, իսկ ուսուցման բովանդակության կանոնավոր թարմացումը միջազգային լավագույն փորձն արտացոլելու համար կօգնի պահպանել դրա արդիականությունն ու արդյունավետությունը:

Զեկույցը հրապարակվել է ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:
Զեկույցում ներկայացված կարծիքներն ու վերլուծությունները հեղինակներինն են և չեն ներկայացնում ժողովրդավարության զարգացման հիմնադրամի կարծիքներն ու դիրքորոշումները:

© 2024. «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ
Հասցե: Մյասնիկյան 12, բն. 40,
2001, վանաձոր, Հայաստան;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. Փոստի հասցե: ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: https://www.peacedialogue.am